№ 121 Յուլիսի 15 (27) **1880** Յուլիսի 15 (27) № 121

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թերթը լուսաբանվում գրվում են միայն խմբագրատան մէջ։

Ցոտաբաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Ռացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է հասկանաք։—Ներքին տեսութիւն։ Նամակ Շուշուց։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ «Polit. Corresp.» լրագրի թղթակցութիւնը։ Թիւրքիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։ Բանասիրական։ Մինչև երբ։

ՊԷՏՔ Է ՀԱՍԿԱՆԱՔ

—

Յարուցանելով «Մշակի» վերջին համարներում այլազգաւոր հայերի ազգի հետ միանալու խնդիրը, մենք բոլորովին նպատակ չունեինք կրօնական խնդիրը յարուցանելու, այլ նայեցինք խնդրի վրա բուն ազգային տեսակէտից։

Մենք ոչ լուսաւորչականներին ենք քարոզում թողնել իրանց կրօնը և ոչ էլ բողոքականներին ու կաթոլիկներին ենք քարոզում թողնել իրանց կրօնը և լուսաւորչական դառնալ...

Մեզ համար նոյն է ինչ կրօնի կը պատկանի այս և այն հայը, մենք գործ չունենք հայի ներքին հաւատքի հետ։ Մենք գործ չունենք կրօնական խնդիրների հետ։ «Մշակը» հասարակաց օրգան է, նրա նպատակն է դառնալ ընդհանուր հայոց պաշտպան, հայոց շահերի ընդհանուր օրգան, միջոց տալ բոլոր հայ համայնքներին, ինչ կրօնին և պատկանեն հայերը՝ յարուցանել, յուզել, բացատրել իրանց հասարակական, ուսումնական, տնտեսական ինտերէսները։

«Մշակը» հասարակաց օրգան է, նա աստուածաբանութեամբ չէ պարապում։ Մեզանից հեռու է, մեր գործ չէ ընտել թէ կրօններից ո՞րը աւելի լաւ է, ո՞րը աւելի վատ է։ Մեզ համար բոլոր կրօնները հաւասարապէս լաւ ու օգտաւէտ են։ Մենք կրօնի և խղճի հաւասարութեան և ազատութեան պաշտպան էինք և միշտ կը լինենք։

Թող ամէն հայը դաւանի այն կրօնը որի մէջ ծնված է, որին համակրում է, բայց թող բոլոր հայերը ազգային տեսակէտից միմեանցից չանջատվեն կրօնի տարբերութեան պատճառով և ձուլվեն ի մի ազգութիւն՝ ազգային ընդհանուր ձուլարանի մէջ, կապված լինելով ընդհանուր հայրենիքի և մայրենի լեզուի միջոցով։

Մենք երբէք ոչ մի կրօնի էութիւնը չենք քննել և երբէք չենք քննի, բայց երբ ժամանակը կը գայ մեր մտքերը կը յայտնենք, ինչպէս անցեալում շատ անգամ յայտնել ենք, եկեղեցու արտաքին վերանորոգութիւնների անհրաժեշտութեան վրա։

Կրօնը ներքին հաւատ է։ կրօնը ուրիշ բան է, եկեղեցու հիմնարկութիւնը ուրիշ բան։

Կարելի է հարկաւոր ժամանակ վերանորոգութիւններ առաջարկենք եկեղեցու արտաքին ձևի, տնտեսական և վարչական կազմակերպութեան մէջ, առանց յանդգնելու կրօնի էական մասերին դիպչելու։

Բայց այժմեան մեր յօդուածների շարքի նպատակն էր միմիայն հասարակական ազգային խնդրի յարուցանելը, աւելի ոչինչ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

--

Յուլիսի 1

Պ. Արէլ Ապրեսեանցի «Մշակի» 107 համարում տպած թղթակցութեան մի քանի տողերը ուզել ես ինձ պարտք եմ համարում ընթերցողների առաջ, ոչ թէ չուչեցիների անտարբերութիւնը արդարացնելու, այլ ճշմարտութիւնը պաշտպանելու նպատակաւ։ Պարտին, ինչպէս երևում է, յայտնի չէ, որ հասարակական գրաւոր բանաւոր համար, բացի փողից, աշխատող մարդկերանցից, համակրութիւնից և այլն, ուրիշ, ոչ պակաս ծանր՝ արգելքներ էլ կան, որպէս կառավարութիւնից թոյլատրութիւն (разрѣшеніе) ստանալ, հասարակական վճիռ (мірскій приговоръ) հաստատել, կանոնադրութիւն չունել և յարմարացնել ժամանակից պայմաններին և այլն, որ գոցա վրա չատ ժամանակ և աշխատանք է խարջվում։

Բացի դրանից, հիմնադիր անդամների թիւը ոչ թէ վաթսուն է, այլ ութսունից աւելի, որոնք համաձայնվել են իւրաքանչիւր տարի տասը բուբլի վճարել ընթերցարանի համար (այլ ոչ թերեն նուիրատուութիւններ, ինչպէս հասկանում է պ. Ապրեսեանցը), ուրեմն մոտաւորապէս 800 բուբլի։ Անդամներից համարեա կէսը արդէն վճարել է իր վարձը, իսկ մնացածի մեծ մասը ուրախութեամբ կը տայ, եթէ մասնաժողովը հարկաւոր համարի պահանջել։ Պէտք է գովել հիմնադիր անդամներին, որոնք լաւ ծանոթ չը լինելով պ. թղթակցի պէս այդ արգելքների հետ, մինչև այժմ լռում են և համբերում, բացի մի քանի անդամներից, որոնք ձանձրանալով վերջապէս յետ են պահանջում իրանց փողը, ի հարկէ, խոստանալով նորից վճարել, եթէ գրատունը զարգանայ։ Պարտին կարող եմ հաւատացնել, որ այդ անտարբերութեան պատճառը մենք ենք, գոնէ այդ գործի մէջ, որ մեր մէջ չում, դուք գարձեալ մեր անդամն եղայրներն էք և մեր ազգի սիրելի անդամներ։

«Մշակը» իր հրատարակութեան հէնց առաջին տարիներից, մեր այլազգաւոր եղայրների վերաբերութեամբ, ընդունել վերջին եղանակը։ Այդ, ի հարկէ, կը վրդովեցնէր չատերին, որոնք աւելի բարձրագոյն էին համարում, որ հաղարավորները և բիւրաւորները մեր ազգից կորչէին, քան թէ լուսաւորչական եկեղեցու մի ոտիսը իր տեղից խախտվէր։

Բայց հարցը չատ պարզ էր, թէն ոմանք չը հասկանալով, և ոմանք չարամտութեամբ ախատում էին և ախատում են այլապէս բացատրել։ Գարգել այն միտքը, թէ մեր կաթոլիկ, բողոքական, յունգաւան և մինչև անգամ մահմեդական եղայրները մեզ նման հայեր են, մեր մարմնից և մեր արիւնից են, և մեր ազգութեանն են պատկանում,—այդ չէ նշանակում թ՞ վնաս լուսաւորչական եկեղեցու գործին։ Լուսաւորչական եկեղեցին մեզ համար նոյնքան սուրբ է, որքան սուրբ են և միւս եկեղեցիները իրանց պատկանող անդամների համար։ Մենք չենք կարող, և մինչև անգամ իրաւունք չունենք ասելու նրանց, թէ փոխեցէք ձեր կրօնը, կրկին մտէք մեր եկեղեցին, այն ժամանակ միայն մենք եղբայրական ձեռք կը մեկնենք ձեզ և կը համբուրվենք ձեզ հետ։ Դրանով մենք իրաւունք կը տանք նրանց նոյնը պահանջել մեզանից։ Եւ այսպէս ազգային միութիւնը երբէք չի կայանայ։

Ոմանք հերքում են փաստը, թէ լուսաւորչական եկեղեցին պատմական կապ ունի մեր ազգայնութեան հետ։ Ոմանք հերքում, որ այդ եկեղեցին չատ դէպքերում ազատել է մեր ազգութիւնը կորստից և չատ դէպքերում ևս վնասել է նրան։ Այսուամենայնիւ, մենք կը պաշտպանք այդ եկեղեցին, և եթէ նա դարերի ընթացքում ստացել է այս և այն խորթ ներմուծութիւնը, կաշխատենք ինքներս ուղղել, առանց թող տալու մի օտարի միջամտութիւնը։ Մենք մեր տունը մեր ձեռքով կը նորոգենք, եթէ հարկաւոր կը համարվի։ Բայց մի և նոյն ժամանակ կը պահպանենք կատարեալ ներողամտութիւն դէպի մեր այլազգաւոր ազգայիները, և առանց վիրաւորելու նրանց կրօնական զգացմունքը, կաշխատենք համոզել նրանց, որ մենք մի և նոյն ազգի զաւակներ ենք, որ մեր ընդհանուր չարերը պահանջում են ազգային սերտ միութիւն, և ամեն ինչ, որ հակառակ է այդ միութեանը, պիտի, մեծապէս և անեղերկի է։

«Մշակը» խօսելով կրօնի մասին, միշտ ազգային կէտից է նայել նրա վրա։ «Մշակը» կրօնափոխութիւն չէ քարոզում, ով որ այսպէս է մտածում, նա կամ կոյր է, կամ խորտակութեամբ լի չարամիտ։ Եւ եթէ «Մշակը» իր էջերը բաց է արել Ամիրխանեանցի, Վիրակասեանցի և Մարկոսեանցի առջև, այդ չէ նշանակում, թէ նա դառնում է գործիք դառնալ երանց ձեռքում, որպէս պնդում են ոմանք։ Մի լրագիր, որ իրան նպատակ է դրել հաշտարար լինել ազգի անջատված, թշնամացած և խորթացած անդամների մէջ, նրա պարտքն է լսել և հրատարակել իւրաքանչիւրի խօսքը։ «Մշակի» մէջ կարող են գրել, որպէս լուսաւորչական, այնպէս էլ կաթոլիկ, բողոքական, մահմեդական և յունգաւան հայերը,—նա ազգային օրգան է և ոչ եկեղեցական։

Մենք Ամիրխանեանցներին և գրանց նմաններին ազգի թշնամի չենք համարում. մենք ազգի թշնամի ենք համարում այն զգուելի հայերին, որ հայերէն չեն խօսում, որ հայերէն չեն կարդում, որ Հայաստանի վրա չեն մտածում, և միայն տարին մի քանի անգամ հայոց եկեղեցին մտնելով, հայ քահանայի ձեռքից հաղորդութիւն են բերում և գրքում իրանց բոլոր պարքը կատարած են համարում։ Մենք ազգի թշնամի ենք համարում այն կարմամիտ ազգասէրներին, որ լուսաւորչական եկեղեցուց դուրս հայ չեն ճանաչում։ Ինչ կը լինէր այդ վերջինների կարծիքով, եթէ հայերի մեծ մասը մի ժամանակ բողոքական կը դառնային, կամ մի ուրիշ կրօն կընդունէին, իսկ ազգի փոքրամայն մէկ եկեղեցուն։ Երկրագնդի վրա, թէ քաղաքակիրթ և թէ վայրենի ազգերի մէջ չը կայ և երբէք չի եղել մի ազգութիւն, որ մէկ եկեղեցու պատկանէր։ Օտար բաղմաթիւ օրինակների վրա ցոյց տալու հարկ չը կայ, այդքանը միայն կասենք, որ հայ ազգը իր տեսանելի դարերում ունէր զանազան կրօնական ազանդներ՝—բուն հայկական, զրադաշտական, աստղական, յունական, հրէական և մինչև անգամ չինական,—և այդ բոլոր ազանդների խառնափնթորութեան մէջ ազգութիւնը դարձեալ չէր կորցնում իր ամբողջութիւնը, աւելի ուժ և զօրութիւն ունէր։

Քրիստոնէութիւնը Հայաստանում մտնելուց յետոյ, պէտք է բնականաբար մի և նոյն երևոյթները կրկնվէին։ Մեր Սուրբ Լուսաւորիչ Հօր հիմնած եկեղեցին չը կարողացաւ մնալ իր սկզբնական պարզութեան մէջ։ Դեռ երկար ժամանակ տեսանելի կրօնի ներքևը մնացին Հայաստանում։ Այդ բաւական չէ, նոյն իսկ Լուսաւորչական եկեղեցին, կաթոլիկ և յունական եկեղեցիների ազդեցութեան ներքևը, սկսեց փոքր առ փոքր կերպարանափոխվիլ, եթէ ոչ ներքին դատաստանական հիմունքների կողմից, գոնէ արտաքին ծիսապաշտութիւնների կողմից։

Մինչև վերջին դարերում յայտնվեցան մեր մէջ կազմակերպված կաթոլիկ, բողոքական և յունադաւան եկեղեցիներ։

Ինչ պէտք էր անել այդ վերջինների հետ։—Երկուսից մէկը, կամ պէտք էր պարզ ասել (որպէս չատերը ասում են) թէ մենք հայոց ազգութիւնը հիմնված ենք համարում միմիայն լուսաւորչական եկեղեցու վրա, որովհետև զուտ բաժանվեցաք այդ եկեղեցուց և մտաք կաթոլիկ, բողոքական և յունադաւան եկեղեցիների գիրկը,—ուրեմն զուտ այլ ևս մեզանից չէք (այսինքն՝ հայ չէք) ըստորում, մենք լուսաւորչական եկեղեցուց դուրս հայութիւն չենք ճանաչում։—Եւ կամ պէտք էր ասել, թէ զուտ ընդունեցեք այս և այն եկեղեցիները, բայց մենք ձեր կրօնական համոզմունքներին չենք դիպչում։

«Մշակը» իր հրատարակութեան հէնց առաջին տարիներից, մեր այլազգաւոր եղայրների վերաբերութեամբ, ընդունել վերջին եղանակը։ Այդ, ի հարկէ, կը վրդովեցնէր չատերին, որոնք աւելի բարձրագոյն էին համարում, որ հաղարավորները և բիւրաւորները մեր ազգից կորչէին, քան թէ լուսաւորչական եկեղեցու մի ոտիսը իր տեղից խախտվէր։

Բայց հարցը չատ պարզ էր, թէն ոմանք չը հասկանալով, և ոմանք չարամտութեամբ ախատում էին և ախատում են այլապէս բացատրել։ Գարգել այն միտքը, թէ մեր կաթոլիկ, բողոքական, յունգաւան և մինչև անգամ մահմեդական եղայրները մեզ նման հայեր են, մեր մարմնից և մեր արիւնից են, և մեր ազգութեանն են պատկանում,—այդ չէ նշանակում թ՞ վնաս լուսաւորչական եկեղեցու գործին։ Լուսաւորչական եկեղեցին մեզ համար նոյնքան սուրբ է, որքան սուրբ են և միւս եկեղեցիները իրանց պատկանող անդամների համար։ Մենք չենք կարող, և մինչև անգամ իրաւունք չունենք ասելու նրանց, թէ փոխեցէք ձեր կրօնը, կրկին մտէք մեր եկեղեցին, այն ժամանակ միայն մենք եղբայրական ձեռք կը մեկնենք ձեզ և կը համբուրվենք ձեզ հետ։ Դրանով մենք իրաւունք կը տանք նրանց նոյնը պահանջել մեզանից։ Եւ այսպէս ազգային միութիւնը երբէք չի կայանայ։

Ոմանք հերքում են փաստը, թէ լուսաւորչական եկեղեցին պատմական կապ ունի մեր ազգայնութեան հետ։ Ոմանք հերքում, որ այդ եկեղեցին չատ դէպքերում ազատել է մեր ազգութիւնը կորստից և չատ դէպքերում ևս վնասել է նրան։ Այսուամենայնիւ, մենք կը պաշտպանք այդ եկեղեցին, և եթէ նա դարերի ընթացքում ստացել է այս և այն խորթ ներմուծութիւնը, կաշխատենք ինքներս ուղղել, առանց թող տալու մի օտարի միջամտութիւնը։ Մենք մեր տունը մեր ձեռքով կը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՆՉԵՎ ԵՐԲ

—

Ժամանակը և ժամանակակից պահանջները յարուցանում են ժողովրդի գործիչների մէջ նոր մտածումներ, նոր գաղափարներ, որոնք առաջ են գալիս իրերի անհրաժեշտութիւնից, և աւելի ճիշտ ասած, ներկայի ծնունդն են։ Նոր մտածումները, նոր գաղափարները կարող են խորթ, օտարոտի և մինչև անգամ վնասակար երևնալ այն անձանց, որոնք ժամանակի պահանջներին չեն հետևում, որոնք անչարժ մնում են հին նախապաշարմունքների վրա։

Ազգայնութեան գաղափարը վաղուց անծանոթ էր մեզ՝ հայերիս։ դեռ. ներկայ դարում երկրորդ կիսաքսանի մէջ նա սկսեց արթնվիլ մեր մտածողների գլխում, բայց այնքան ազատ և այնքան խառնաձիգներ կերպով, որ մի որոշ կերպարանք ընտանալ չը կարողացաւ։ Ամենաջերմ և ամենանվիրեալ ազգասէրները չփոթում էին ազգը կրօնի հետ և կրօնը եկեղեցու հետ։ Եւ եկեղեցուց բաժանված անդամների վրա նայում էին, որպէս հեթանոսների վրա և նրանց այլ ևս հայ չէին համարում։ Հայեր համարվում էին նրանք միայն, որ պատկանում էին լուսաւորչական եկեղեցուն։ Եւ այսպէս, ազգութիւնը և եկեղեցին կազմում էին մի անբաժանելի միութիւն, որի անջատումը, նրանց կարծիքով, կարող էր պատճառել երկուսի էլ մահացութիւնը։

Բայց այդ դրութիւնը երկար չէր կարող պահպանվել։ Նա ոչ միայն անբնական էր, այլ հակառակում էր ազգերի յառաջադիմութեան օրէնքներին։ Անկարելի էր, որ հայ ազգը պատկանէր

համաքաղաքացիք մեզանոր չեն. օրինակի համար, ինդրեմ ասէք, ո՞ւր են հին գրատան կտորները, որ հինգերկու է 60 թուականների սկզբումը, ո՞ւր է նորա կանոնադրութիւնը, ցուցակները և այն թէպէտ յոյս ունեմ կարդալ մի օր «Մշակի» մէջ նրա անվան և փաստաբերի համար մանրամասն տեղեկութիւններ. Եթէ պ. Թղթակիցը ցանկանայ մտածել շուշվայ պատմական կեանքի պայմանների վրա և հետևաբար չուշեցիների ազատութիւնից, նախապաշարմանց, աչխարհանայեցողութեան, ընտանեական կեանքի վրա և այլն, այն ժամանակ պիտի ոգևորանար երգ դոցա ծայրայեղ համակրութեան վրա։ Այո, չուշեցիները բարի այն մեռնող վառ յատկութիւններից, որոնք նաևանկաց են իւրաքանչիւր հայ վաճառականին, ունեն և չատ լաւ, աչքի զարնող կողմեր, որոնց մոռանալ, յանձն չառներ մեծ անարդարութիւն է մեր կողմից։ Մասնաւորվը սպասել է ուելի մեծ արդիւնքների հանդիպել հասարակութեան կողմից և կարող է ուելի մեծ անարդարութեան առաջը առնել, ուրեմն պարտը կարող է միամիտ լինել, որ բոլորը մինչև այժմ զբաղում է իր բնական ընթացքով և որ գրիչաւորութիւնները այդպէս չուտ չեն կազմվում և փոխվում։ Ցոյս կայ որ գրատունը չատ չուտով գոյութիւն ստանայ։ Վերջացնելով պատասխանս, կարող եմ ասելացնել պ. Ագրեսեանցին, որ մարդիկ ուելի լաւ են քան թէ նոցա վրա մտածում —կարծում են։

Մ. Աստամանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 11 յուլիսի

Հայրապետաց և եկեղեցու հարց գրութիւնները լիքն են մոլորված ոչխարներին կրկին եկեղեցու փարախը մտցնելու ջանքերի մանրամասն տեղեկութիւններով։ Ցայտնի է որ Ղեբէս շնորհալին ինչպէս ալխատում էր սխալված անհատներին ուղղելու, այս նա փափաքում էր և ուրիշներին էլ ճշմարտութեան գիտութեանը բերել։ Լուսաւորչական եկեղեցու այդ մեծ հեղինակը այժմեան պրոտաբոյծ և թուլամարթ հոգևորականների պէս, կամ փծուն իմաստասիրութեամբ ճանաչակող զբոյչների պէս չէր ասում, թէ հայ միայն լուսաւորչականն է, այլ հազար տարու չափ ազգի մեծ մասի կրօնքին հակառակ արեգակը պաշտող արևորդիներին ճանաչում էր իբրև հայ, ասելով իր «Ի Սամոսատա քաղաքէ» գրած Թղթումը, թէ ասպէս լսազն Հռոմայ պղտոմիսոյն անուանեալք մեռելոց,... այսպէս և արևորդիքդ յաղագս մերոց ասացեալ. և լեզուաւ ի տունմէ հայոց ենք, և ասելեալներով այս հետեւեալ խօսքերը «թէ մեք վասն հրամանին Քրիստոսի կամին և Ցանմանք արկանել զնսա՝ թէ հնար էր և զամենայն ազգա՝ ի յուսկան պատարագի նորոգ, ցոյց է տալիս այդ պատուական հայրապետը, թէ որքան լաւ հասկացել է իր հովուական պարտքը, այն հովուական պարտքը, որի ներկայը Նշելիկել մարդարէն լդ. զբլխում նկարագրում է «մինչ հովիւք զանձինս արածեն. ոչ հովիւք զխաչին արածեն։ Արդ աւարսիկ զկանգ ուտէք, և զասրդ (բուրդը) ագանիք, զպարարան զենուք (մորթում է՞ք), ու զխաչն՝ իմ ոչ արածէք. զանկարգեալն ոչ զօրացուցանէք, և զդիւանդացեալն ոչ բժշկեցէք, զաւարեալն ոչ յանձնանձեցէք (խնամեցէք) և զրեկեալն ոչ պատեցէք, զմոլորեալն ոչ դարձուցէք և զկորուսեալն ոչ խնդրեցէք»։ Նոյնպէս և նորա քաջ աղգականը և գերազանց անուանակիցը՝ Ներսէս լամբրոնացին իր «առ քրիստոսասէր թագաւոր Հայոց Լևոն ուղղած Թղթումը մի անենարագրելի բաղձանք և եռանդ է յայտնում, որ գնայ թագաւորի ներկայութեամբ վիճէ և վիճաբանէ մոլորված Զորոյգեանցների հետ՝ ասելով «Ի՞նչ ինձ ինչ ի՞նչ ձեր դրամանաւ եկեսցեն առաջի ձեր ընդ մեզ՝ ի մրցումն. զի ոչ է այս արիութիւն զինուորի՝ յիւրաւորանան թուր չղոցացուցանել, և զոգս հարկանել, այլ որ՝ ի հանդիսի տեղին իշանէ և ընդդէմ անայանին կայ։ Նոյնպէս իսա, զի չէ ուղիղ մարտ հոգեոր, որ՝ ի Զորոյ գեա նասի և զկս՝ ի Պիլիկիայ յայաղէ (յիշոց տայ). Թող դան՝ ի հանդիսի տեղիս տան վերս և առնուն (վերք տան և վերք ստանան), և որ յաղթող լինի Քրիստոսի ճշմարտութեամբն՝ զգովաբիանն ընկալցի։ Նոքա ինձ երկու երեք թուղթ են գրեալ նախատինք (տկարութեան նշան է). ես գիրք մի բովանդակ եմ գրեալ զհայոց ազգիս անկարգութիւնս (ափսոս որ ենենգամիտներ ոչնչացրել են այդ անգին հայրապետի անգին գիրքը). որ յետոյ մտանեն. համմամտեմք իրեարց. թէ ո՞ զօրանայ առ ճշմարտութիւնն, և՝ ի գրոց ձայնակցութիւնս—իմն թէ նոցայն»։

Մինչդեռ այսպէս ճշմարիտ հայրապետները եռում են սիրով ու նախանձով մոլորեալներին ուսուցանելու, մենք աւետարանական հայերս, որ մոլորված ենք համարվում մինչև ցարդ, մի այնպիսի բան չը նկատեցինք։ Մենք միշտ լսեցինք հայհոյանք, նախատինք, յիշոցներ, անէծք, նզովք և ուրիշ չատ տգեղ ածականներ, թէ ընդանցի, թէ նամակներով, թէ լրագրերում, թէ եկեղեցու բեմից, բայց մեկ հատիկ անգամ ոչ մի հոգեոր բան, ոչ մի ազնիւական մեզ հետ խօսելու, ոչ մի ազնիւական մեզ հետ խորհելու արժանի չը համարեց։ Թող մեզ հետ խոսելիս... այսպէս և արևորդիքդ յաղագս մերոց ասացեալ. և լեզուաւ ի տունմէ հայոց ենք, և ասելեալներով այս հետեւեալ խօսքերը «թէ մեք վասն հրամանին Քրիստոսի կամին և Ցանմանք արկանել զնսա՝ թէ հնար էր և զամենայն ազգա՝ ի յուսկան պատարագի նորոգ, ցոյց է տալիս այդ պատուական հայրապետը, թէ որքան լաւ հասկացել է իր հովուական պարտքը, այն հովուական պարտքը, որի ներկայը Նշելիկել մարդարէն լդ. զբլխում նկարագրում է «մինչ հովիւք զանձինս արածեն. ոչ հովիւք զխաչին արածեն։ Արդ աւարսիկ զկանգ ուտէք, և զասրդ (բուրդը) ագանիք, զպարարան զենուք (մորթում է՞ք), ու զխաչն՝ իմ ոչ արածէք. զանկարգեալն ոչ զօրացուցանէք, և զդիւանդացեալն ոչ բժշկեցէք, զաւարեալն ոչ յանձնանձեցէք (խնամեցէք) և զրեկեալն ոչ պատեցէք, զմոլորեալն ոչ դարձուցէք և զկորուսեալն ոչ խնդրեցէք»։ Նոյնպէս և նորա քաջ ազգականը և գերազանց անուանակիցը՝ Ներսէս լամբրոնացին իր «առ քրիստոսասէր թագաւոր Հայոց Լևոն ուղղած Թղթումը մի անենարագրելի բաղձանք և եռանդ է յայտնում, որ գնայ թագաւորի ներկայութեամբ վիճէ և վիճաբանէ մոլորված Զորոյգեանցների հետ՝ ասելով «Ի՞նչ ինձ ինչ ի՞նչ ձեր դրամանաւ եկեսցեն առաջի ձեր ընդ մեզ՝ ի մրցումն. զի ոչ է այս արիութիւն զինուորի՝ յիւրաւորանան թուր չղոցացուցանել, և զոգս հարկանել, այլ որ՝ ի հանդիսի տեղին իշանէ և ընդդէմ անայանին կայ։ Նոյնպէս իսա, զի չէ ուղիղ մարտ հոգեոր, որ՝ ի Զորոյ գեա նասի և զկս՝ ի Պիլիկիայ յայաղէ (յիշոց տայ). Թող դան՝ ի հանդիսի տեղիս տան վերս և առնուն (վերք տան և վերք ստանան), և որ յաղթող լինի Քրիստոսի ճշմարտութեամբն՝ զգովաբիանն ընկալցի։ Նոքա ինձ երկու երեք թուղթ են գրեալ նախատինք (տկարութեան նշան է). ես գիրք մի բովանդակ եմ գրեալ զհայոց ազգիս անկարգութիւնս (ափսոս որ ենենգամիտներ ոչնչացրել են այդ անգին հայրապետի անգին գիրքը). որ յետոյ մտանեն. համմամտեմք իրեարց. թէ ո՞ զօրանայ առ ճշմարտութիւնն, և՝ ի գրոց ձայնակցութիւնս—իմն թէ նոցայն»։

Մինչդեռ այսպէս ճշմարիտ հայրապետները եռում են սիրով ու նախանձով մոլորեալներին ուսուցանելու, մենք աւետարանական հայերս, որ մոլորված ենք համարվում մինչև ցարդ, մի այնպիսի բան չը նկատեցինք։ Մենք միշտ լսեցինք հայհոյանք, նախատինք, յիշոցներ, անէծք, նզովք և ուրիշ չատ տգեղ ածականներ, թէ ընդանցի, թէ նամակներով, թէ լրագրերում, թէ եկեղեցու բեմից, բայց մեկ հատիկ անգամ ոչ մի հոգեոր բան, ոչ մի ազնիւական մեզ հետ խոսելու, ոչ մի ազնիւական մեզ հետ խորհելու արժանի չը համարեց։ Թող մեզ հետ խոսելիս... այսպէս և արևորդիքդ յաղագս մերոց ասացեալ. և լեզուաւ ի տունմէ հայոց ենք, և ասելեալներով այս հետեւեալ խօսքերը «թէ մեք վասն հրամանին Քրիստոսի կամին և Ցանմանք արկանել զնսա՝ թէ հնար էր և զամենայն ազգա՝ ի յուսկան պատարագի նորոգ, ցոյց է տալիս այդ պատուական հայրապետը, թէ որքան լաւ հասկացել է իր հովուական պարտքը, այն հովուական պարտքը, որի ներկայը Նշելիկել մարդարէն լդ. զբլխում նկարագրում է «մինչ հովիւք զանձինս արածեն. ոչ հովիւք զխաչին արածեն։ Արդ աւարսիկ զկանգ ուտէք, և զասրդ (բուրդը) ագանիք, զպարարան զենուք (մորթում է՞ք), ու զխաչն՝ իմ ոչ արածէք. զանկարգեալն ոչ զօրացուցանէք, և զդիւանդացեալն ոչ բժշկեցէք, զաւարեալն ոչ յանձնանձեցէք (խնամեցէք) և զրեկեալն ոչ պատեցէք, զմոլորեալն ոչ դարձուցէք և զկորուսեալն ոչ խնդրեցէք»։ Նոյնպէս և նորա քաջ ազգականը և գերազանց անուանակիցը՝ Ներսէս լամբրոնացին իր «առ քրիստոսասէր թագաւոր Հայոց Լևոն ուղղած Թղթումը մի անենարագրելի բաղձանք և եռանդ է յայտնում, որ գնայ թագաւորի ներկայութեամբ վիճէ և վիճաբանէ մոլորված Զորոյգեանցների հետ՝ ասելով «Ի՞նչ ինձ ինչ ի՞նչ ձեր դրամանաւ եկեսցեն առաջի ձեր ընդ մեզ՝ ի մրցումն. զի ոչ է այս արիութիւն զինուորի՝ յիւրաւորանան թուր չղոցացուցանել, և զոգս հարկանել, այլ որ՝ ի հանդիսի տեղին իշանէ և ընդդէմ անայանին կայ։ Նոյնպէս իսա, զի չէ ուղիղ մարտ հոգեոր, որ՝ ի Զորոյ գեա նասի և զկս՝ ի Պիլիկիայ յայաղէ (յիշոց տայ). Թող դան՝ ի հանդիսի տեղիս տան վերս և առնուն (վերք տան և վերք ստանան), և որ յաղթող լինի Քրիստոսի ճշմարտութեամբն՝ զգովաբիանն ընկալցի։ Նոքա ինձ երկու երեք թուղթ են գրեալ նախատինք (տկարութեան նշան է). ես գիրք մի բովանդակ եմ գրեալ զհայոց ազգիս անկարգութիւնս (ափսոս որ ենենգամիտներ ոչնչացրել են այդ անգին հայրապետի անգին գիրքը). որ յետոյ մտանեն. համմամտեմք իրեարց. թէ ո՞ զօրանայ առ ճշմարտութիւնն, և՝ ի գրոց ձայնակցութիւնս—իմն թէ նոցայն»։

Մինչդեռ այսպէս ճշմարիտ հայրապետները եռում են սիրով ու նախանձով մոլորեալներին ուսուցանելու, մենք աւետարանական հայերս, որ մոլորված ենք համարվում մինչև ցարդ, մի այնպիսի բան չը նկատեցինք։ Մենք միշտ լսեցինք հայհոյանք, նախատինք, յիշոցներ, անէծք, նզովք և ուրիշ չատ տգեղ ածականներ, թէ ընդանցի, թէ նամակներով, թէ լրագրերում, թէ եկեղեցու բեմից, բայց մեկ հատիկ անգամ ոչ մի հոգեոր բան, ոչ մի ազնիւական մեզ հետ խոսելու, ոչ մի ազնիւական մեզ հետ խորհելու արժանի չը համարեց։ Թող մեզ հետ խոսելիս...

ռամանութիւնը միայն կը մնար հաւատարիմ լուսաւորչական եկեղեցուն,—ուրեմն այդ փոքրամանութիւնը միայն պիտի՞ կազմէր մեր ազգութիւնը։

Մեզ ասում են, թէ հայը լեզու չունի, թէ հայը հայրենիք չունի, թէ նրա լեզուն, հայրենիքը և ազգային բոլոր առանձնութիւնները բովանդակվում են միմիայն եկեղեցու մէջ.—խլեցէք նրանից եկեղեցին, փոխեցէք նրա կրօնը,—ազգութիւնը այն ժամանակ կը քաքայվի։ Մի այսպիսի կարծիք կարող են ունենալ հայ ազգի մասին տգեղները միայն, որոնք խիստ նեղ և սահմանափակ հայացքով են նայում ազգային խնդրի վրա։

Եթէ իսկապէս հայը զրկված է իր ազգային լեզուից, զրկված է իր հայրենիքից, կորցրել է իր ցեղական առանձնութիւնները և պահպանվում է միմիայն եկեղեցու գրկում, այն ժամանակ նրան ազգ պէտք չէ համարել, այլ պէտք է համարել մի կրօնական աղանդ, որ մնում է նոյն իսկ եկեղեցու մէջ, որի մէջ ապատան է գտել։ Մի այսպիսի ազգի համար չարժէ աշխատել, չարժէ մը-ռածել անգամ, որովհետև նա կը քաքայվի, կը լուծվի և կանհետանայ զանազան ազգութիւնների մէջ, երբ իր պաշտպանութեան համար ուրիշ միջոց չունի, բացի կրօնը։

Բայց մեր հաւատը մեծ է հայ ազգութեան վրա, մենք հաւատում ենք, որ նա ունի հարատև կենսական ոյժ և կենդանի, նոր գրականական լեզու. մենք հաւատում ենք, որ նա ունի իր պատմական հայրենիքը և տակաւին բնակվում է իր հայրերի հողի վրա. մենք հաւատում ենք, որ նա ունի իր որոշ ցեղական յատկութիւնները, որ դարերի ընթացքում չեն փոխվել, և վերջապէս, մենք հաւատում ենք, որ նա ունի իր յատուկ ազգային եկեղեցին։ Լեզու, հայրենիք, եկեղեցի, ցեղական առանձնութիւններ,—ահա այն գլխաւոր հիմունքները, որոնցով, հաւատացած ենք, կը պահպանվի մեր ազգութիւնը։ Հարկաւոր են և ուրիշ մի քանի պայմաններ, այդ, ի հարկէ, մեզանից ամենն մեկը հասկանում է,—դրանց մասին ոչ կարող ենք և ոչ պէտք ենք համարում խոսել։

«Մշակը» «Տարբերան մտքերը վերնագրով առաջնորդող յօդուածների մէջ արդէն բացատրեց այն հարցերը, թէ մի ազգի պահպանելիան համար ինչ գեր են խաղում կրօնը, լեզուն և հայրենիքը,—և թէ զրանցից իւրաքանչիւրը որքան և ինչ չափով են նպաստում ազգի գոյութեան պահպանվելուն, երբ զանազան հանգամանքների պատճառով մինը կամ միւսը փոփոխութեան են ենթարկվում։ Մենք այսքանը բաւական համարելով, հարկաւոր ենք տեսնում կրկին վերադառնալ այն հարցին, թէ ինչ չան ունենք անդադար կրկնելով մի և նոյն հին երգը, թէ լուսաւորչական եկեղեցին մեր ազգի միակ հիմքն է, թէ այդ եկեղեցուց զուրս ոչ փրկութիւն կայ և ոչ հայութիւն, թէ բողոքական, կաթոլիկ, յունադասան և մահմեդական հայերը, եթէ կամենում են մեզ հետ մնալու, պէտք է կրկին վերադառնան դէպի իրենց մայրենի եկեղեցին, և այլ այսպիսի ցնդաբանութիւններ։

Այսպէս կարող են մտածել այն մարդիկը միայն, որոնք չը գիտեն մեր ազգի այժմեան վիճակը և տեղեակ չեն նրա ժամանակակից պահանջներին։ Եւ ցաւալին այն է, որ այսպէս երկար ժամանակ մտածում էին մեր ազգի առաջնորդները։ Գէտք էր մի զրնդ դէպք, մի պատմական չոչափելի անջրպետութիւն, որ զուրս բերէր մեր ժողովրդի առաջնորդներին յիշեալ մոլորութիւններից, ցոյց տար, թէ որքան անհիմն են նրանք։ Բարեբախտաբար այդ դէպքը տեղի ունեցաւ։ Քրիստոնեաների ազատութեան անունով ծագեց ռուս-թուրքական պատերազմը, և հայերը կարմիր արեան փսխաբէն սև մնացը գործածելով, ստացան Ասանոնցիանի 16 և Բերլինի ուսագանցողի 61-րդդ յօդուածները։ Վերջին յօդուածի տրամադրութեան համեմատ, Թուրքիան պարտաւորվում էր վերանորոգութիւններ մտցնել իր պետութեան «հայերով բնակեցած գաւառների մէջ։ Այստեղից ինչ ասել է՝ «հայերով բնակեցած գաւառներ»։ Ինչպէս ասում